ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԳՀԾՁ-ԱԻՆ-19/72-1

ք. Երևան «17» 10 2019թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Օհանյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԷՔՍ> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս.Սալամյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N 1 Հավելվածում:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **5 290 800** (հինգ միլիոն երկու հարյուր իննսուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011028736 ՀՎՀՀ 00153247 Գլխավոր քարտուղար՝ _____Վ. Օհանյան /ստորագրություն/ Կ.Տ	<ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԵՔՍ> ՍՊԸ ք. Երևան, Նոր Արեշ 2-րդ փողոց, 8-րդ տաղ. Արդշինբանկ ՓԲԸ Հ/Հ 2473702454710000 ՀՎՀՀ 01515273 Տնօրեն՝ _____Ս.Սալամյան /ստորագրություն/

Հավելված N 1
«17» 10 2019 թ. կնքված
N ԳՀԵՁ-ԱԻՆ-19/72-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ծառայության չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման հասցեն	մատուցման ժամկետը**
1	71351540/505	Ներկայացված է ստորև	դրամ	120000	1	N1 ՀՓՁ Երևան, Իսակովի 9/1	Մինչև 15.12.2019թ.
3	71351540/507	Ներկայացված է ստորև	դրամ	120000	1	N5 ՀՓՁ Երևան, Ղափանցյան 7/3	Մինչև 15.12.2019թ.
5	71351540/509	Ներկայացված է ստորև	դրամ	102000	1	N13 ՀՓՁ Երևան,Ա. Միկոյան 109/12	Մինչև 15.12.2019թ.
7	71351540/511	Ներկայացված է ստորև	դրամ	252000	1	Ճամբարակի ՀՓՁ ք.Ճամբարակ,Տիգրան մեծի փ.1	Մինչև 15.12.2019թ.
8	71351540/512	Ներկայացված է ստորև	դրամ	199200	1	Հրազդանի ՀՓՁ Ք.Հրազդան,Ռ.Միքայելյան փ.13	Մինչև 15.12.2019թ.
9	71351540/513	Ներկայացված է ստորև	դրամ	120000	1	Եղվարդի ՀՓՁ Ք.Եղվարդ,Սաֆարյան փ.1 նրբ	Մինչև 15.12.2019թ
10	71351540/514	Ներկայացված է ստորև	դրամ	150000	1	Չարենցավանի ՀՓՁ Ք.Չարենցավան,Հոկտեմբերյան փ.2	Մինչև 15.12.2019թ.
12	71351540/516	Ներկայացված է ստորև	դրամ	252000	1	Դիլիջանի ՀՓՁ Ք.Դիլիջան,Շամաղյան փ.4	Մինչև 15.12.2019թ
13	71351540/517	Ներկայացված է ստորև	դրամ	252000	1	Անիի ՀՓՁ Ք.Մարալիկ,Շահինյան փ.3	Մինչև 15.12.2019թ.
16	71351540/520	Ներկայացված է ստորև	դրամ	120000	1	Երևան N3 ՀՓՁ ք.Երևան, Գլինկայի փ.13	Մինչև 15.12.2019թ.
17	71351540/521	Ներկայացված է ստորև	դրամ	150000	1	Արագած ՀՓՁ Արագածոտնի մարզ գ.Ծաղկահովիտ 1-ին փող., 2	Մինչև 15.12.2019թ
18	71351540/522	Ներկայացված է ստորև	դրամ	72000	1	Ապարան ՀՓՁ Ք.Ապարան, Գայի փ. 17	Մինչև 15.12.2019թ
19	71351540/523	Ներկայացված է ստորև	դրամ	300000	1	Թալին ՀՓՁ Ք.Թալին, Երևանյան փ. 10	Մինչև 15.12.2019թ.
20	71351540/524	Ներկայացված է ստորև	դրամ	252000	1	Վարդենիս ՀՓՁ Ք.Վարդենիս, Չարենցի փ. 64	Մինչև 15.12.2019թ.
22	71351540/526	Ներկայացված է ստորև	դրամ	300000	1	Տաշիր ՀՓՁ Ք.Տաշիր, Գորկու փ.18	Մինչև 15.12.2019թ.
23	71351540/527	Ներկայացված է ստորև	դրամ	252000	1	Թումանյան ՀՓՁ Ք.Ալավերդի Թումանյան փող	Մինչև 15.12.2019թ
24	71351540/528	Ներկայացված է ստորև	դրամ	348000	1	Տավուշ ՀՓՁ Ք.Բերդ , Թումանյան փ.1	Մինչև 15.12.2019թ
25	71351540/529	Ներկայացված է ստորև	դրամ	252000	1	Նոյեմբերյան ՀՓՁ ք.Նոյեմբերյան, Կամոյի փ.1	Մինչև 15.12.2019թ.
26	71351540/530	Ներկայացված է ստորև	դրամ	204000	1	Արմավիր ՀՓՁ Ք.Արմավիր, Աբովյան փ.151	Մինչև 15.12.2019թ.
27	71351540/531	Ներկայացված է ստորև	դրամ	150000	1	Էջմիածին ՀՓՁ Վաղարշապատ, Աթարբեկյան փ.11	Մինչև 15.12.2019թ
28	71351540/532	Ներկայացված է ստորև	դրամ	252000	1	Ջերմուկ ՀՓՁ Ք.Ջերմուկ, Ջախափնյա փ.1	Մինչև 15.12.2019թ.
29	71351540/533	Ներկայացված է ստորև	դրամ	204000	1	Մասիս ՀՓՁ ք.Մասիս, Բաղրամյան փ.26	Մինչև 15.12.2019թ.
30	71351540/534	Ներկայացված է ստորև	դրամ	300000	1	Գորիս ՀՓՁ Ք.Գորիս, Բակունցի փ.1	Մինչև 15.12.2019թ.
31	71351540/535	Ներկայացված է ստորև	դրամ	348000	1	Ագարակ ՀՓՁ Ք.Ագարակ Սայաթ-Նովա փ.26	Մինչև 15.12.2019թ
32	71351540/536	Ներկայացված է ստորև	դրամ	219600	1	Վեդի ՀՓՁ Ք.Վեդի, Արցախի փ. 7	Մինչև 15.12.2019թ.

1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան:
2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում :
3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են՝

ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը շինարարական նորմերին և կանոններին,
շինարարության սկզբից մինչև ավարտն ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը (օբյեկտի առանձին հանգույցների նախնական և ավարտական տեսքը՝ նույն դիրքից, ծածկված աշխատանքները, մալուխների և լարերի անցկացումը, ջրագծերի և կոյուղագծեի անցկացումը),
Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը,
ստուգել և հաստատել բանվորական գծագրերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից,
ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի մասնագրերում և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,
վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի,
ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները , որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր հաշվարկները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումներն իրականացնելու համար,
ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար,
կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում,
գտնել շինարարության ժամանակ առաջացող խնդիրները և առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքները արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար,
հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինաշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ և հրահանգել Կապալառուին տեղադրել նշաններ՝ լուսավորության անվտանգության սարքերի և այլ համապատասխան միջոցառումների իրականացման համար,
կատարել անհրաժեշտ գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր),
ստուգել և անհրաժեշտության դեպքում կատարել փոփոխություններ Կապալառուի կողմից նախապատրաստված բանվորական նախագծերի մեջ,
կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը,
շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները, Պատվիրատուի ցուցումով չափագրել կատարման ենթակա աշխատանքները,
Շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտներում:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011028736
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

_____Կ. Օհանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԷՔՍ> ՍՊԸ
ք. Երևան, Նոր Արեշ 2-րդ փողոց, 8-րդ տաղ.
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2473702454710000
ՀՎՀՀ 01515273
Տնօրեն՝

_____Ս.Սաղաթյան
/ստորագրություն/

Հավելված N 2
« 11 » 10 2019 թ. կնքված
N ԳՀԵՁ-ԱԻՆ-19/72-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/505	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Երևանի N1 ՀՓՁ)										120000	120000	120000	120000
3	71351540/507	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Երևանի N5 ՀՓՁ)										120000	120000	120000	120000
5	71351540/509	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Երևանի N13 ՀՓՁ)										102000	102000	102000	102000
7	71351540/511	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Ճամբարակի ՀՓՁ)										252000	252000	252000	252000
8	71351540/512	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Հրազդանի ՀՓՁ)										199200	199200	199200	199200
9	71351540/513	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Եղվարդի ՀՓՁ)										120000	120000	120000	120000
10	71351540/514	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Չարենցավանի ՀՓՁ)										150000	150000	150000	150000
12	71351540/516	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Դիլիջան ՀՓՁ)										252000	252000	252000	252000

13	71351540/517	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Անի ՀՓՁ)										252000	252000	252000	252000
16	71351540/520	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Երևանի N3 ՀՓՁ)										120000	120000	120000	120000
17	71351540/521	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Արագած ՀՓՁ)										150000	150000	150000	150000
18	71351540/522	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Ապարան ՀՓՁ)										72000	72000	72000	72000
19	71351540/523	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Թալին ՀՓՁ)										300000	300000	300000	300000
20	71351540/524	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Վարդենիս ՀՓՁ)										252000	252000	252000	252000
22	71351540/526	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Տաշիր ՀՓՁ)										300000	300000	300000	300000
23	71351540/527	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Թումանյան ՀՓՁ)										252000	252000	252000	252000
24	71351540/528	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Տավուշ ՀՓՁ)										348000	348000	348000	348000
25	71351540/529	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Նոյեմբերյան ՀՓՁ)										252000	252000	252000	252000
26	71351540/530	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Արմավիր ՀՓՁ)										204000	204000	204000	204000
27	71351540/531	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Էջմիածին ՀՓՁ)										150000	150000	150000	150000
28	71351540/532	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Ջերմուկ ՀՓՁ)										252000	252000	252000	252000

29	71351540/533	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Մասիս ՀՓՁ)										204000	204000	204000	204000
30	71351540/534	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Գորիս ՀՓՁ)										300000	300000	300000	300000
31	71351540/535	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Ագարակ ՀՓՁ)										348000	348000	348000	348000
32	71351540/536	Տեխնիկական հսկողության ծառայություններ (Վեդի ՀՓՁ)										219600	219600	219600	219600

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011028736
ՀԿՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

_____Կ. Օհանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԷՔՍ> ՍՊԸ
ք. Երևան, Նոր Արեշ 2-րդ փողոց, 8-րդ տաղ.
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2473702454710000
ՀԿՀՀ 01515273
Տնօրեն՝

_____Փ.Սալանյան
/ստորագրություն/

Հավելված 3
«17» 10 2019 թ. կնքված
N ԳՀԾՁ-ԱԻՆ-19/72-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Արտակարգ իրավահիճակների նախարարության կարիքների համար տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ԳՀԾՁ-ԱԻՆ-19/72-1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
Սալամյան Սուրեն	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«17» 10 2019 թ. կնքված
N ԳՀԾՁ-ԱԻՆ-19/72-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝
Պատվիրատուի անունը
Պատվիրատու) և «ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԷՔՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող)
Կատարողի անունը

միջև 20 թ. _____ -ին կնքված N **ԳՀԾՁ-ԱԻՆ-19/72-1**
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

«ԱՐՍՏԱԿ-ԻՄՊԷՔՍ» ՍՊԸ-ի տնօրեն
Սուրեն Սայամյան
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն